

ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՊԸ ԱՆՁԻ ԱՅԼ
ԱՌԱՆՉՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՏ

Գ. Ռ. Հայրապետյան
ԵՊՀ Հոգեբանության բաժնի ուսանող

Կրեատիվությունը որպես ստեղծագործականություն, հոգեբանության մեջ սկսվում է ընկալվել ոչ թե իր նախնական նեղ իմաստով (դիվերգենտ մտածողություն), այլ ընդգրկում է հոգեկանի ավելի լայն տիրույթներ: Կրեատիվությունը անխզելիորեն կապված է ոչ միայն ինտելեկտուալ կառույցների, այլև որոշակի հարաբերությունների մեջ է գտնվում անձնային առանձնահատկությունների հետ ընկալվելով նաև որպես մտածողական և անձնային առանձնահատկությունների համալիր:

Ստեղծագործականության ուսումնասիրությունները բազմաբնույթ են. սակայն մենք կառանձնացնենք 2 հիմնականները.

1. Կրեատիվության և ինտելեկտի փոխհարաբերությունները բացահայտող:

2. Կրեատիվության և անձնային ու դրոպապատճառային որակների փոխհարաբերությունները ուսումնասիրող:

Այս կոնտեքստում դիտարկելուց կրեատիվությունը դուրս է գալիս իր նեղ սահմաններից և հանդես գալիս ավելի լայն հասկացության ձևով. ընդգրկել ինչ որ նորույթ փորձի մեջ(Բարրոն), ծնել նոր և յուրահատուկ մտքեր(Ուոլլախ), գիտակցել խնդիրը, ստեղծել իրավիճակի պակասող տարրերի մասին վարկածներ (Տորրենս), հրաժարվել մտածողության ստերեոտիպային ձևերից(Գիլֆորդ):

Կրեատիվության տեսության զարգացման համար շրջադարձային դարձավ Ուոլլենի կողմից ստեղծագործական գործընթացի փուլերի բաժանումը: Նա դրանով նշեց, որ ստեղծագործական լուծումները ոչ թե պատահաբար են հայտնվում, այլ ունեն իրենց զարգացման օրինաչափ ընթացքը:

Դպրոցում մեզ սովորեցնում են մտածել տաքսոնոմիկ կատեգորիաներով և այս միջոցի կիրառումը սահմանափակվում է արհեստական իրավիճակներով: Եվ երբ ուսանողները կարիք են զգում գործել ոչ այնպես, ինչպես դպրոցում են սովորեցրել ծնել սեփական մտքեր, այլ ոչ թե վերլուծել և կրկնել ուրիշներինը, նրանց մոտ բարդություններ են առաջանում: Փաստորեն դպրոցում տեղի է ունենում ինտելեկտուալ կոնֆորմիզացիա և շատ դեպքերում համալսարանը չի կարողանում լրացնել այդ բացը:

Կրեատիվության և կրեատիվ անձնավորության ճանապարհին կանգնած են բազմաթիվ արգելքներ. որոնց հաղթահարումն է միայն հասցնում բարձր արդյունավետության: Անձը ստիպված է լինում պայքարել ինչպես ներքին (կոնֆորմիզմ, ֆունկցիոնալ ֆիկացիա, հետևանքների գերազնահատում), այնպես էլ արտաքին(չընդունվել հասարակության կողմից, առաջարկված մտքերի թերագնահատում) արգելքների դեմ:

Տարբեր գիտնականների կողմից առաջարկված են բազմաթիվ մեթոդներ, որոնք օգնում են զարգացնել կրեատիվությունը և խնդրային վիճակները լուծել ավելի արդյունավետ: Առավել ճանաչված արդյունավետ մեթոդներից է Չաբրևի «ուղեգրային գրոհի» մեթոդը, ինչպես նաև Այանի առաջարկած 10 ստրատեգիաները: Սակայն չպետք է կարծել, թե կրեատիվությունը բանաձև է, որը մի անգամ սովորելով, կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում: Այն բարդ և երկարատև գործընթաց է, որի զարգացումը պահանջում է երկարատև աշխատանք անձի հետ: Մեր կատարած հետազոտական աշխատանքը նպատակ էր հետապնդում պարզել, թե որքանով է անբարդանում համալսարանը բարձր կրեատիվ մասնագետների պատրաստման լինողին:

Հետազոտությանը մասնակցել են 103 ուսանող՝ բաժանված 4 խմբի՝ ըստ կուրսերի.

I-ին 33, II – 30, III – 16, IV – 24:

Կրեատիվությունը հետազոտվել է Տորրենսի թեստի օգնությամբ: Այն ընդգրկում է 4 պարամետրերի հանրագումար, որոնք էլ պայմանավորում են կրեատիվությունը (ստեղծագործականություն).

ա) հնարամտություն.

բ) միավորելու ընդունակություն.

գ) դիվերգենտ (ոչ ստանդարտ մտածողություն).

դ) ազատ ասոցիացիաներ:

Անձնային առանձնահատկությունները հետազոտվել են Կետտելի 16PF մեթոդի միջոցով: Այն բացահայտում է անձնային 16 հիմնական և 4 հավելյալ առանձնահատկություններ:

Ըստ կրեատիվության պարամետրի I կուրսի հետազոտվողների ցուցանիշը 82 էր: Հաջորդ տարիների ընթացքում այն օրինաչափորեն աճում էր մինչ IV կուրս համապատասխանաբար II կուրսում 104, III-ում 120, սակայն IV կուրսում նկատվում է կրեատիվության անկում մինչև նախնական ցուցանիշը 83: Հետաքրքրական է նաև այն, որ հնարամտության և միավորելու ընդունակության պարամետրերը քիչ փոփոխական են, իսկ կրեատիվության փոփոխությունները տեղի են ունենում դիվերգենտ մտածողության և հիմնականում ազատ ասոցիացիաներ ծնելու ընդունակության հաշվին:

Հատկանշական էին նաև անձնային առանձնահատկությունների հետ կրեացիոն վերլուծության արդյունքները:

I, II և III կուրսերում նկատվում էր աճող ուղիղ համեմատական կապ կրեատիվության և անձնային M պարամետրի միջև: Սակայն այդ կապը IV կուրսում կորչում է: Հետևաբար կարող ենք խոսել նրանց փոխապայմանավորվածության մասին: Նշանակալի կորելացիոն կապեր են հայտնաբերվել նաև այլ անձնային առանձնահատկությունների միջև, սակայն ստացված արդյունքները կարիք ունեն հետագա մշակումների: Եվ քանի որ հետազոտությունը կրում է երկայնական (լոնգիթյուդային) բնույթ, ապա հետագա ուսումնասիրությունները թույլ կտան դիտարկել կրեատիվության զարգացման օրինաչափությունները նույն ընտրանքի վրա: Փաստորեն նկատվում են հետևյալ օրինաչափությունները.

1. Կրեատիվությունը, հանդիսանալով մտածողական, երևակայական և անձնային առանձնահատկությունների համակարգ, համալսարանական ուսուցանման տարիներին ենթարկվում է զարգացման օրինաչափությունների, սակայն նախնական արդյունքների համաձայն IV կուրսում նկատվում է կրեատիվության անկում:

2. Կրեատիվությունը փոփոխվում է ավելի շատ երևակայական, քան մտածողական և անձնային առանձնահատկությունների հաշվին:

3. Կրեատիվությունը անվիճելիորեն կապված է անձի ինտելեկտուալ և անձնային կառույցների հետ և փոխապայմանավորում է դրանք.

4. I-ից III կուրսերում, կրեատիվության աճին զուգընթաց, ուղիղ համեմատական կապ է հաստատվում անձնային M պարամետրի հետ, կապը IV կուրսում անհետանում է: Անձնային M պարամետրը բնութագրվում է որպես պրակտերիա - աուտիա: Այսինքն բարձր ցուցանիշները բնութագրում են հարուստ երևակայությամբ օժտված, բոհեմային, գաղափարներով տարված, երազկոտ, արվեստով և տեսություններով հետաքրքրվող անձին: